# ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ԼԵՒՈՆ ՇԱՆԹԻ ՇՂԹԱՅՈՒԱԾԸ ԴՐԱՄԱՅՈՒՄ

ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

*Լեւոն Շանթի (Սեղբոսեան, 1869-1951) Շղթայուածը 1918ին Լոզանում գրուած խորհրդապաշտական գեղագիտական սկզբունքով ստեղծուած դրամա է, որտեղ, 1917ի ռուսական երկու՝ Փետրուարեան ու Հոկտեմբերեան Յեղափոխութիւնների ազդեցութեան ներքոյ, այլաբանական պատկերներով արտայայտուել են հեղինակի հանրային կեանքի զարգացման վերաբերեալ ունեցած բարոյափիլիսոփայական հայեացքները։*

*Շղթայուածը դրամայում, միջնադարեան Անի քաղաքում ԺԲ. դարում ընթացող պատմական դէպքերը զուգակցւում են ժողովրդի հազարամեակների փորձառութեանը։*

*Առասպելական Արտաւազդը հեթանոս հայերի համար ազատութեան խորհրդանիշ էր, մինչդեռ յետագայում դարձաւ չարութեան խորհրդանիշ։ Ժողովրդի իմաստութիւնը բանտարկեց նրան։ Ժամանակ էր պէտք՝ մինչ մարդը կը կարողանար ըստ ամենայնի գործադրել իր ազատութիւնը։*

*Այս գաղափարը Շանթն ամբողջացնում է Անիում կատարուող իրադարձութիւններով։ Ժողովուրդը, իշխան Պահլաւունու գլխաւորութեամբ, թօթափում է թուրք էմիրի բռնակալութիւնը, ինչը պայմաններ է ստեղծում ժողովրդի ազատ զարգացման համար։ Սակայն ազատութեանը միտուած բնազդի կրողները շարունակում են պայքարն արդէն հանրային կարգի դէմ. տիրում է քաոսը։ Ակնյայտ է դառնում, որ մերժելով աշխարհի «բոլոր կարգերը»՝ անհնար է հասնել փափաքելիին։ Ապագայում միայն, տիրելու, իշխելու մղումները իր մէջ յաղթահարած մարդը կը կարողանայ իրականութիւն դարձնել ազատութեան գաղափարը, հետեւապէս եւ խորտակել Արտաւազդի շղթաները։ Անիում ստեղծուած ընդհանուր քաոսին վերջ է տալիս իշխան Պահլաւունին՝ բանականութեան կրողը։ Նա զսպում է գագազած ամբոխին՝ վերականգնելով ընդհանուր կարգը։*

*Քննադատական միտքն առանձնապէս չի կարեւորել Շանթի այս երկը։ Սիմէոն Յակոբեանն այն «գեղարուեստական մոլորութիւն»[1] համարեց։ Յակոբ Օշականը եւս խիստ էր եզրայանգման մէջ՝ դրաման*

«վրիպանք մըն է Լեւոն Սեղբոսեանէն չկասկածուած պարզմտութեամբ մը»[2]:

Յետագայում եւս, առանձին նշանակութիւն չի տրուել այս երկին: Գրաքննադատները՝ նկատի ունենալով երեւոյթների միայն արտաքին կողմը, խստօրէն սահմանափակել են դրամայի գաղափարական բովանդակութեան սահմանները: «Շանթը գնում է դէպի պատմութեան կամայական մեկնաբանութիւնը»[3],- գրում է Էդուարդ Թոփչեանը: Նա աւելացնում է. «Գրողը չի ըմբռնում Հոկտեմբերեան սոցիալիստական մեծ յեղափոխութեան նշանակութիւնն ամբողջ մարդկութեան եւ հայ ժողովրդի համար»[4]: Սարգիս Փանոսեանը դրամայում առաջնային համարելով «մարդու հոգեւոր բարոյական կատարելութիւնը» (ընդգծումը հեղինակինն է - Վ.Գ.), այսուամենայնիւ ենթադրում է, որ «գեղարուեստական դրամա ըստ էութեան չի ստացուել»[5]: Սերգէյ Սարինեանը Շղթայուածը «կառուցուածքով ու գաղափարով բարդ» (ընդգծումը մերն է - Վ.Գ.) ստեղծագործութիւն է համարում, որտեղ «արտացոլուել են հայոց ազգային ձգտումներն ու երազանքները»[6] ռուսական վերոյիշեալ յեղափոխութիւնների իրադարձութիւններում:

Դրամատիկական այս երկը քննելիս, նախապէս հարկ է աչքի առաջ ունենալ այն պայմանական իրականութիւնը, որ ստեղծել է հեղինակը: Առանց գեղարուեստական այդ միջավայրի, պարզապէս անհնարին կը լինէր արծարծել այն գաղափարները, որոնք յուզում էին հեղինակին: Դրանք ամբողջացնել մէկ կառուցիկ ֆաբուլայի օգնութեամբ պարզապէս անհնարին էր: Շանթը նախընտրել է սիւժէի, գաղափարների զարգացումը. հետեւապէս՝ միջավայրի ռէալ բնոյթը միայն միջոց է՝ իդէան առաւել ամբողջական դարձնելու համար: Ժամանակագրական առումով եւս, այստեղ տարբեր երեւոյթներ են ի մի բերուած: Շանթը Շղթայուածքով զարգացնում էր իր նախապէս հեղինակած մէկ այլ դրամայի՝ Հին Աստուածների (1909) ստեղծագործական աւանդները: Աւելի ճիշտ, նկատի ունենալով նախկին փորձը, նա փնտռում եւ գտնում էր նոր ուղի: Հին Աստուածներում երազատեսութեան, երեւոյթների միստիկ խորութեան սիմվոլիկ բացայայտումները ստեղծում էին դրամատուրգիական ստատիկ պատկերների շարք: Շղթայուածքում սիմվոլի արտայայտման նման ձեւերից ձերբազատումը Շանթին յանգեցրին ժանրի դինամիկ արտայայտման կերպին: Այստեղ սիմվոլը մարմնաւորուում է անընդհատ գործողութեան մէջ՝ տարածա-ժամանակային տարբեր հանգամանքներում:

Սակայն, անհրաժեշտ է առանձին ուշադրութիւն դարձնել գրողի՝ հասարակական կեանքի վերաբերեալ ունեցած հայեացքների վրայ, որպէսզի առաւել յստակ պատկերացում ունենանք դրամայի մասին:

Հասարակական կեանքը Շանթի համոզմամբ «գործարանաւոր» մարմին է, որի ղեկավար սկզբունքն ամբողջ օրգանիզմի օգուտն է, օրգանիզմի ամբողջական զարգացումն ու ապահովումը։ Միւս կողմից, ընկերական այդ բարդ միութիւնը կազմուած է «մարդ-մասնիկներէ», որոնք տարբեր ձգտումներ, իրենց մասնաւոր «հաշիւն ու շահը, պէտքն ու կեանքը» ունեն։ Եւ ամբողջութեան շահն ամէն անգամ չի «համապատասխաներ ամէն մէկ անձի մասնաւոր շահին ու ձգտումին»։ Եթէ ընդհանուրի համար կարեւորն ամբողջութեան բունած ուղին է ու առաջադիմութիւնը, ապա «ամեն անձ ստիպուած է իր օգուտը, իր վիճակը մտածելու, անոր համար ամենակարեւորը ինքն է, ամենէն առաջ ի՛ր գոյութիւնը, ետքը՝ ամբողջութիւնը»։ Բնականաբար ընկերական կազմի բաղադրիչ մասերի միջեւ առկայ է մշտական դժգոհութիւնը, շահերի հակադրութիւնը, պայքարը։ Մարդիկ նոյն դիրքի վրայ չեն եւ ոչ էլ «նոյն արժէքն ու դերը ունին»։ «Մէկ խօսքով՝ ընկերային կազմի եւ ընդհանրապէս օրգանական կազմի յաւիտենական հիւանդութիւնը տնտեսական ու վարչական անհաւասարութիւնն է, որուն զոյգ կ՚երթայ նաեւ կէս-բերան տրտունջ մը մարդկանց մէջ եղած բնական անհաւասարութեան դէմ, ինչպէս է գեղեցկութիւնը, տաղանդը, խելքը, ուժը, առողջութիւնը»[7] (բոլոր ընդգծումներն մերն են - Վ.Գ.)։

Շանթի համաձայն, բոլոր դարերում գրկուածներն ու անիրաւուածները փորձել են տիրող կարգերը փոխելու։ Այդ մաքառումներին զուգընթաց, «ազնիւ ու մտածող» մարդիկ ճիգեր են թափել գտնելու այնպիսի ընկերային կազմի վիճակ, որտեղ անարդարութիւնը, անհաւասարութիւնը, շահագործումը գոնէ մեղմէին, «նուազ անտանելի դարձնէին»։ Այդ տեսակ մտքի «ազնիւ ճիգ մըն է սոցիալիստական աշխարհայեացքը»[8]։ Այս գաղափարախօսութեան հաւասարութեան պահանջները Շանթի համոզմամբ վերացնում են թէ՛ ժողովուրդների եւ թէ՛ առանձին մարդկանց անհատականութիւնը։ Նրանք, ովքեր պաշտպանում են բոլորին ընդհանուր եղող, իրար նմանեցնող, իրար հաւասարեցնող գծերն ու յատկութիւնները (որոնք անհամեմատ աւելի հին են ու հիմնականը), պահպանողականներ են, իսկ յարմարուող, հնարող, տարբերուող յատկութիւններն ու գծերը նոր ճանապարհներ են բացում, ձգտում են նոր ձեւերի, «այսինքն կեանքի յառաջդիմական սկզբունքն են»։ Մարդկային հոգու այս երկու տիպերն էլ անհրաժեշտ են եւ իրար լրացնող, որովհետեւ կեանքն «այդ երկու հակադիր սկզբունքներու հիւսքէն է կազմուած»[9]։ Եւ եթէ ինչ-որ պահի, դրանցից որեւէ մէկը շեշտուի, անտեսելով հակադիր սկզբունքը, «այն չափով կ՚ըլլայ հիւանդոտ եւ յետադիմական, այսինքն հակառակ օրգանական

ու ընկերային կեանքի բնական ընթացքին ու զարգացմանը»[10] (բոլոր ընդգծումներն մերն են - Վ.Գ.):

Շանթի բնափիլիսոփայական հայեացքները, որոնք ներառում էին մարդուն, հասարակական կեանքն՝ իր հոգեւոր ու նիւթական արժէքներով, ձեւաւորուել էին ինչպէս գերմանական դասական փիլիսոփայութեան ազդեցութեամբ, այնպէս էլ՝ ժամանակի գիտութեան յայտնաբերած արդիւնքներով: Ֆրանսիացի փիլիսոփայ Օգիւստ Կոնտը (1798-1857) մասնաւոր սեփականութիւնը հռչակեց «հասարակական պարտականութիւն»[11]: Անգլիացի սոցիոլոգ եւ հոգեբան Հերբերտ Սպենսէրը (1820-1903) կողմնակից էր աննկատ էվոլիւցիային. հասարակութիւնը զարգացման բոլոր ձեւերի ժամանակ թօթափում է հին կեղեւը, սակայն այն արմատական վերակառուցման չպէտք է ենթարկուի: Ամէն փոփոխութիւն «պէտք է կատարուի աստիճանաբար»[12]:

Հասարակական կեանքի վերաբերեալ առաջաւոր մտածողների գաղափարներին ծանօթ լինելով, ինչպէս նաեւ անգլիացի բնագէտ Չարլզ Դարուինի (1809-1857), գերմանացի կենսաբան Էռնստ Հեկէլի (1834-1919)՝ տեսակների կենսաբանական վերափոխումների եւ համաշխարհային զարգացման էվոլիւցիոն տեսութեան իւրացումով, Շանթն ի վերջոյ յանգում էր գերմանացի փիլիսոփայ Ֆրիդրիխ Նիցշէի (1844-1900) փիլիսոփայութեանը: Վերջինս ժամանակի գիտութեան արդիւնքները տարածում էր մշակոյթի համաշխարհային պատմութեան զարգացման ընթացքի վրայ: Մարդը, նրա համար, առաջընթացի ընդամէնը մէկ օղակն է եւ ո՛չ վերջինը: «Մարդս մի բան է, որ պէտք է յաղթահարուի»[13], ասում է Նիցշէի Զրադաշտը: Այս միտումն առկայ էր ինչպէս Շանթի ստեղծած կերպարներից Վանահօր (*Հին Աստուածներ*) խօսքում, այնպէս էլ Նաղաշի (*Շղթայուածը*) խորհրդածութիւններում. «Մ՛էջ, դուք դեռ մարդ չէք, դուք դեռ այն մարդը չէք, որ Աստուած ստեղծել կ՛ուզէ. դուք դեռ մարդու մէկ նախնական նմուշն էք միայն, Աստծու առաջին փորձերը անասունէն մարդը ստեղծելու»[14]:

Եթէ Նիցշէի համար, նոր էակը Գերմարդն է, ապա, Շանթի համար՝ այն մարդը, որ կեանքի դեւին «յաւիտեան հպատակ եւ հասարակ կենդանի» չէ, աւելի՛ն է, քան մարդը: Դրան հասնելու համար բանական արարածն ինքնայաղթահարման ճանապարհով հարկ է, որ մեռցնի իր միջի բռնակալը, որ «կ՛ուզէ իշխէ ամենուն վրայ, կ՛ուզէ խլէ ուրիշներուն ունեցածը, կ՛ուզէ ուտէ ուրիշներուն աշխատանքը, կ՛ուզէ, որ բոլորը երկրպագեն իրեն ու ծառայեն իր քմայքին ու հաճոյքին» (270):

Գրողը երեւոյթները տեսնում է զարգացման ընթացքի մէջ, եւ այստեղ եւս պահը ժամանակի միաւոր չէ, այլ յաւերժութեան:

Երկի բովանդակութեան մէջ հիմնարար տեղ է գրաւում այն միտումը թէ մարդ-կատարեալին հասնելու անդուլ մաքառումները մշտատեւ են։ Խորքում, այն առնչւում է ազատութեան պրոբլէմին։

Եւ ահա այստեղ է, որ Շանթը յայտնաբերում է Արտաւազդին՝ իբրեւ ազատութեան գաղափարի։ Պատահական չէ, որ նա դրամային կցել է երկու բնաբան, նախ՝ Ե. դարու մատենագիր Եզնիկ Կողբացուց. «Զոմն Արտաւազդ անուն արգելեալ ի՛ցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, եւ նա ելանելոց է եւ ունելոց զաշխարհս», ապա եւ Պատմահայր Մովսէս Խորենացուց՝ «Զրուցեն զսմանէ եւ պառաւունք, եթէ արգելեալ կայ յայրի միում, կապեալ երկաթի շղթայիւք. եւ երկու շունք հանապազ կրծելով զշղթայսն՝ ջանան ելանել եւ առնել վախճան աշխարհի. այլ ի ձայնէ կռանահարութեան դարբնոց զօրանան, ասեն, կապանքն։ Վասն որոյ բազումք ի դարբնաց յաւուր միաշաբաթուոջ երիցս բախեն զսալն, զի զօրասցին, ասեն, շղթայքն Արտաւազդայ» (219)։

Բնաբաններից իսկ ենթադրելի է, որ դրամատուրգն արծարծում է այնպիսի խնդիր, որ դրսեւորմամբ երկակի է։ Ինչպէս Հին Աստուածներում առաջմղիչ ոյժը մտքի եւ զգացմունքի, հոգու եւ մարմնի հակադրամիասնութիւնն է, որ պայմանաւորում է զարգացման ընթացքը, այնպէս էլ Շղթայուածքում, մարդն էութեամբ հակադրամիասնութիւն է։ Եթէ զգացմունքը, բնազդը փորձեն իշխել, առանց անսալու բանականութեանը, ապա ընդհանուր կարգի մէջ կը տիրի քաոսը, իսկ եթէ բանականութիւնն անտեսի զգացմունքը, ապա բարոյական կորուստներն անխուսափելի են։

Շանթը դեռեւս բնաբանում, իրարամերժ հատուածների շնորհիւ, ցուցադրում է երեւոյթի զարգացման պատմական ընթացքը։ Եթէ ընդունենք, որ անիրաւուած խաւը յոյսը կապել է բարի Արտաւազդի հետ, իսկ տիրողներն ամէն կերպ հաւատացրել են մարդկանց, թէ վերջինս չար է, այլ խօսքով՝ եթէ երեւոյթին որոշակիօրէն սոցիալական բովանդակութիւն տանք, ինչպէս դա սովորաբար արուել է, ապա կ՚ընկնենք հակասութեան մէջ։ Տէրեր ու գրկուածներ, շահագործողներ եւ շահագործուողներ եղել են բոլոր ժամանակներում։ Խնդիրը Շանթի համար, ինչպէս գերմանացի փիլիսոփայ Իմանուիլ Կանտի (1724-1804) պարագայում, հրթիռկան է։ Դա զարգացման իւրայատուկ ընթացք է, որին հասել է ժողովուրդը՝ տեւական ժամանակի ընթացքում։ Անտեղի է դիտողութիւնն այս առիթով։ Իսկապէս, Կողբացու Արտաւազդը բարի է, որ պիտի դուրս գայ եւ տիրի աշխարհը. մարդիկ սպասում են նրան։ Իսկ Խորենացու Արտաւազդը չար է. նա պիտի դուրս գայ եւ քանդի աշխարհը։ Սա տարբեր հայեացքների, տարբեր աշխարհների հակադրութիւն է, որ անհանգստացրել է դրամատուր-

գին։ Միմեանց են հանդիպադրուած հեթանոս եւ քրիստոնեայ ժամանակները։

Գրող Աւետիք Իսահակեանը, 1938ի Դեկտեմբերին գումարուած յատուկ նիստում, «Սասունցի Դաւիթ» էպոսի համահաւաք բնագիրը քննարկելիս, հետաքրքիր եւ կարեւոր դիտարկումներ է կատարել։ Նա զուգահեռներ է տարել այդ էպոսի հերոսներից Մհերի, վրաց Ամիրանի, հին յոյների Պրոմեթէոսի, Արտաւազդի եւ պարսից Բիւրասպի միջեւ։ Եթէ Կողբացու «Արտաւազդը բարի է ... եւ հայ հեթանոսները սպասում են նրան», ապա Խորենացու «Արտաւազդը չար է. նա դուրս պիտի ելնի, աշխարհը քանդէ. որն արգելելու համար քրիստոնեայ հայերը մուրճի հարուածներով նորից ամրացնում են նրա շղթաները»։ Եւ իբրեւ եզրակացութիւն՝ «քրիստոնեայ աշխարհը, իբրեւ տիրող կարգի պաշտպան, բանտարկում է Մհերին, իսկ հեթանոսութիւնը իր յոյսը կապել է նրա ազատագրման հետ»[15]։

Շղթայուածքի գործողութեան զարգացման ընթացքում փաստ է, որ տիրող կարգի պաշտպաններն ամէն կերպ աշխատում են պահել Արտաւազդի, իբրեւ կործանարար դեւի գաղափարը, իսկ նրանք, ովքեր տենչում են ազատութիւնը, հոգու խորքում փայփայում են ազատութեան ռահվիրայի կերպարը։ Բայց գրողը նկատում է, որ Արտաւազդի, իբրեւ չար ոյժի, պաշտպաններ են նաեւ այնպիսի մարդիկ՝ դարբին Աւագի հայրը, Ջուլհակը, ովքեր ոչ մի կերպ կապուած չեն իշխանութեանը եւ չարքաշ աշխատաւոր են։

Շանթը չի կարեւորում դասային տարբերութիւնը. նրա համար էականը մարդ արարածի բնոյթն է՝ հակասական, իրարամերժ ձգտումներով։ Աւելին՝ եթէ իշխանութեան գլուխ կարող են գալ դեմոկրատ, ժողովրդական ոյժերը, ապա դրանից էութիւնը չի փոխուելու. մի բռնապետին փոխարինելու է միւսը։ Այնքան ժամանակ, քանի դեռ մարդիկ կ'առաջնորդուեն եսասիրական մղումներով, բռնապետական մի ձեւը կը փոխարինուի միւսով։

Անցեալը խորհրդանշում է ԺԲ. դարի Անին՝ սելջուկների տիրապետութեան շրջանում, երբ հայերի եւ վրացիների միջեւ համագործակցութիւնը դրական արդիւնք տուեց։ Կապերն ամրապնդուեցին վրաց Դաւիթ Շինարար (1089-1125) թագաւորի օրօք։ Անեցիներն ապստամբեցին սելջուկների դէմ եւ դիմեցին Վրաստանի օգնութեանը։ Նրանք քաղաքի դարպասները բացեցին օգնութեան եկող վրաց բանակի առաջ[16]։ Այս դէպքերի արձագանգները կան Շանթի երկում։ Սակայն նիւթի ընտրութիւնը թոյլ էր տալիս եւ նոր ժամանակներին առնչուող հարցեր քննարկել։ Դէպքերին մասնակցել են ժողովրդական մասսաները. նրանք գայրացել եւ ապստամբել են[17]։ Ինչեւիցէ, Շանթը, պատմական դէպքերն ազդակ ունենալով, ստեղծել է պայմանական

միջավայրը, որտեղ դրսեւորուել են ինչպէս հասարակական կեանքի, այնպէս էլ զուտ մարդու, իբրեւ բանական արարածի, վերաբերեալ գրողի բարոյափիլիսոփայական հայեացքները։

Անի քաղաքի վերնախաւի՝ ազնուականութեան եւ հարուստ առեւտրականների կողմից, հանգամանօրէն կազմակերպւում է համաժողովրդական ապստամբութիւն՝ թուրքական բռնակալութեան դէմ։ Պահլաւունի իշխանը հարիւրի չափ ընտիր զինուորներ ունի. մարզպետն ու միւսներն էլ ունեն։ Իշխանը համոզուած է յաղթանակի մէջ, եթէ իրենք կարողանան ոտքի հանել արհեստաւորներին։ Այստեղ եւս հաշուարկները ճիշտ են արուած։ Պահլաւունու խորհրդով Էմիրի՝ հարկերի վերջին յաւելումները «դանակը ոսկորին» են հասցրել. դժգոհութիւնը հասել է գագաթնակէտին։ Իշխանը խորհուրդներով հանգըստացնում է գազանին. «ժողովուրդ ըսածդ միշտ կը տրտնջայ. միշտ ալ բեռը շալակը առած քաշ կու տայ. այդպէս է անոր հնադարեան սովորութիւնը» (223-224)։ Հետեւապէս, միանգամայն իրաւացի է Էմիրը. առանձնապէս չի կարելի կարեւորութիւն տալ ժողովրդին գրգռող մի քանի «մանր-մունր արշաւանքներին», առաւել եւս՝ տուրքերի յաւելումներին։ Ամէն ինչ հին կարգով է ընթանալու, եւ իշխանն ամէն կերպ օժանդակելու է «իրենից ուժեղին»։ Պահլաւունին, վերափոխման համար ներսում հող ստեղծելուց բացի, այդ ամէնն «ապահովագրում է» եւ դրսի ոյժերով։ Նա որոշում է արքայավայել նուէրով ներկայանալ վրաց Դաւիթ թագաւորին՝ գօրք ստանալու ակնկալիքով։

Նպատակը մէկն է. ինչ գնով էլ ուզում է լինի՝ ազատել քաղաքը թուրքերից. «ազատուինք սա գարշելի լուծէն. ազատ չունչ քաշենք մենք, քիչ մը ազատ չունչ քաշէ եւ մեր խեղճ ժողովուրդը. նորէն վերջապէս ամեն ինչ անցնի հայու ձեռքը։ Հերի՛ք է» (225)։

Քաղաքական վերափոխումն իրականանում է։ Ժողովրդի ճակատագրում տեղի է ունենում արմատական վերափոխում։ Նա ազատւում է այլազգի բռնակալի լծից։ Այդ պայքարի ընթացքում միասնական էին ժողովրդի բոլոր խաւերը։ Ոյժի նպատակամէտ գործադրումը տապալում է Էմիրի ստեղծած աւանդական կարգը, հրի ճարակ է դարձնում նրա պալատը։ Այլեւս անգօր է թուրք աստիճանաւորը՝ իր գայթակղիչ խոստումներով. ոչ ոք պարիսպները պաշտպանելու ո՛չ ոյժը եւ ո՛չ էլ ցանկութիւնն ունի։ Կործանւում է բռնակալի որջը։

Թւում է՝ ամէն ինչ հանդարտուելու է, եւ բոլորովին անտեղի են խլրտումները։ Սակայն, դէպքերի ընթացքը ցոյց է տալիս, որ արթնացած բնազդներն այդքան հեշտութեամբ տեղի չեն տալիս։ Ազատագրական շարժումը, որն հիմքում տնտեսական միտումներ եւս ունէր, վերջին հաշուով յանգում է սոցիալականի։ Այս վերափոխման նպատակը անհատի ազատութեան խնդիրն է։ Եթէ առաջին աստիճանում

բոլորի նպատակները գրեթէ համընկնում էին հիմնական խնդրում, թէ՝ Անին պէտք էր ազատագրել օտարի լծից, ապա, երկրորդ աստիճանում, առաւել սուր են արտայայտւում անհատական ցանկութիւնները։ Եւ շատ յաճախ անհատների նպատակները չեն համընկնում ընդհանուր նպատակին։ Դրանք կարող են եւ հակադրուել[18]։ Դեռեւս առաջին արարում, Շանթը առանձնացնում է մարդ-անհատի՝ իբրեւ առանձին կենսաբանական էակի, ինքնապաշտպանական հակումները։ Ամենատարբեր կարգի մարդիկ կարեւորում են իրենց անձնական-անհատական նպատակները եւ յետոյ նոր միայն հասարակականը։

Ստեղծւում է յաւերժական հակադրամիասնութիւն։ Մարդը ձգտում է իդէալին՝ անհատական որակների շնորհիւ փորձելով միաւորել երկրային կեանքն իր ամենատարբեր արտայայտման կապերի մէջ, իսկ «ես»ը ամէն կերպ խոչընդոտում է դրան։ Մարդկային բնոյթը երկակի է։ Թէ ինչպիսի՛ որակներ են գերիշխում նրա էութեան մէջ, ըստ այդմ էլ որոշւում են տուեալ անհատի հոգեւոր-բարոյական նկարագրի սահմանները։

Առաջին արարում աստիճանաբար ձեւաւորուող հանգոյցի թելերը տարածւում են յաջորդ տեսարաններում։ Սկզբնական դժգոհութիւնն աշխատաւորների մէջ դառնում է առաւել հետեւողական ու հաստատուն։

Համեմատաբար տարեց սերունդն աւանդական կարգ ու կանոնի պահապանն է։ Նա մշտապէս կողմ է նախահայրերի՝ կռանը սալին զարկելու սովորոյթին։ Դրա խորհուրդը բաւականին մեծ է, եւ նոր սերընդին ժամանակ է պէտք այդ ամէնը սեփական կենսափորձով ճշտելու համար։ Հարճի՝ Արտաւազդին ազատագրուած տեսնելու ցանկութիւնը Պառաւ ծառային սարսափեցնում է. «Թող, աղջի՛կ, թո՛ղ, դեռ շատ հեռու է աշխարհքի վերջը» (229)։ Տարեց սերնդի յիշողութեան մէջ, Արտաւազդը չար ոյժի մարմնացում է, որ պիտի յայտնուի եւ աւերի աշխարհը։ Այս պարագայում էլ Շանթը հարցն առնչում է կեանքի կոնկրետ ձեւերին՝ շրջանցելով միֆը։ Դարբինը կեանքի անհաւասարութեան հիմքում ընդգծում է սոցիալական ծանր կացութիւնը, որի մէջ յայտնուել են ինքն ու իր նմանները։ Նա համոզուած է, որ անհրաժեշտ է գնալ Նաղաշի գաղափարների յետեւից, դրանք իրականութեան վերածել։ Այդպէս է մտածում երիտասարդ սերունդը։ Այդպէս է մտածում Հարճը, բոլոր նրանք, ովքեր աւելի հեշտութեամբ են տրւում զգացմունքներին եւ իրենց ձգտումների քուրայում հասնում են գրեթէ էյֆորիայի։ Դարբինը համոզուած է Նաղաշ գաղափարախօսի ճշմարտութեան մէջ. «Անիծուած են այս աշխարհքի բոլոր կարգերը» (232)։

Որպէսզի ասելիքն ամբողջական լինի, Նաղաշի կողմնակիցները նորանոր մտքերով ամբողջացնում են նրա ճառերը. Արտաւազդը քանդելու է ո՛չ Աստծոյ արարած, այլ մարդու ստեղծած աշխարհը՝ «կողոպուտի ու բռնութեան ու գողերու աշխարհը»: Եւ, ընդհանրապէս, այդ պայքարն ուղղուած է լինելու հասարակական օրգանիզմը կարգաւորող ինստիտուտների դէմ. «մի՛ աշխատիք ուրիշի հաշուին, ձեր աշխատանքը մի՛ տաք ուրիշին. ո՛չ հարկ տուէք, ո՛չ տուրք, ո՛չ մաքս, ո՛չ տասանորդ. մի՛ թողնէք, որ կողոպտեն ձեզի. ձեր կռանները իջեցուցէք անոնց գլխուն, որոնք իրենց ձեռքը կ՚երկարեն ձեր աշխատանքին» (234):

Ակնյայտ է, որ նման դէպքում «ըստ բնութեան» ապրելու հակումները, կամ զիջումները՝ բնութեանը, յղի են ամենածանր հետեւանքներով: Չէ՞ որ մարդու ու հասարակութեան գոյութեան երկարատեւ ընթացքը տանում է բնութիւնից վեր ճանապարհով. ամէն մի զիջում բնութեանը, նշանակում է զիջում բնազդներին:

Այստեղ էլ միօրինակ ու պարզունակ չէ դրամատուրգը: Հասարակական օրգանիզմը գոյատեւել է, քանի որ եղել են միմեանց հակադիր ու հաւասարակշռող ոյժեր: Զգացմունքով առաջնորդուելու, «ազատ, հաւասար, արդար» ապրելու մղումներ ունեցել են նաեւ նախորդ սերունդները, մասնաւորապէս՝ հեթանոս հայերը, իսկ նրանց բարի Արտաւազդը այսուամենայնիւ չկարողացաւ այդ աշխարհը փրկել չարիքից եւ կործանուեց: Անցած էտապ դարձաւ հայ հեթանոս ժամանակը: Դրան փոխարինեց մի նոր ժամանակ, եւ ժողովրդի յիշողութեան մէջ արդէն ի յայտ եկած եւ ընդհանուր կարգը աւերած միֆական հերոսը վերածուեց չար ոյժի:

Եւ, ահա, աւագ սերունդը, որպէս նախընթաց կենսափորձի, բարոյա-էթիկական պատկերացումների պահապանի, հակադրւում է Արտաւազդի՝ որպէս փրկարար ոյժի գաղափարին: Զուլհակը, որ քաղաքի «խեղճ ու անճար» մարդկանցից է, շատ է տեսել ծանր օրեր եւ լաւ է սերտել «ուժեղներուն բարկութիւնը, հարուստներուն խստութիւնը ու թուրքերուն գազանութիւնը»: Նա երեւոյթները կշռում է մտքի լծակով. «Դուք բոլորդ ձեր Նաղաշի տաք խօսքերուն կը հաւատաք, իսկ ես իմ պաղ տեսածիս ու պաղ ապրածիս» (234): Այս գործող անձը սառը բանականութեամբ առաջնորդուելու մղում-պահանջը լծորդում է ժողովրդի դարերի փորձառութեանը: Ինչպէ՞ս կարելի է սալին չիջեցնել կռանն՝ ամրացնելու Արտաւազդի շղթաները, եթէ նրա վրայ հօր անէծքը կայ, «մեր հայրերու անէծքը» (234): Վերջապէս, Զուլհակն իր իրատեսութիւնը հաստատում է կոնկրետ փաստարկներով. «Կայ հարուստ, կայ աղքատ. ուժեղը կայ, խեղճը կայ, ես ու դո՞ւն պիտի փոխենք աշխարհքի կարգը» (232): Կենսափորձը, իր ապրածն ու տեսածը հիմք են տուել նրան հաւասարակշիռ ենթադրութիւնների.

բնութեան մէջ ոչինչ չի կարող լինել միատեսակ ու առաւել եւս՝ իր արտաքին ու ներքին որակներով հաւասար։ Ուժեղի եւ տկարի միջեւ մշտապէս կան եւ լինելու են հակասութիւններ, քանի որ նրանք՝ բնութեան կողմից տրուած շնորհների միջոցով, վերջին հաշուով, հասարակութեան մէջ գրաւում են իրենց տեղը. «կայ հարուստ եւ աղքատ»։ Եւ, յանկարծ, մի զարկով փորձել վերացնել աշխարհքի «անիծուած» կարգերը, ընդհանուր հաւասարութիւն ստեղծելու միտումով, շատ տարօրինակ ու անիրականանալի է թւում Ջուլհակին։ Չէ՞ որ այն՝ ինչ հասել է նոր ժամանակներին, «կշռուել» է բազում անգամներ։ Եւ հիմա, այդ ամէնը չափել մի սերնդի ենթակայական համոզմունքներով, միամտութիւն է՝ «ես ու դու՞ն պիտի փոխենք աշխարհքի կարգը»։

Հարցադրումների շրջագիծն աստիճանաբար ընդլայնւում է։ Աշխատաւորի վարանոտ հաւաստիացումները հիմնաւորւում են Դարբնի հօր ունեցած համոզմունքներով։ Այստեղ արդէն անառարկելի է սերունդներին փոխանցուած կենսափորձի, իմաստութեան գիտակցումը. «առաջ պապս էր. վերջը հայրս, վերջը ես, հիմա էլ Աւագս»։ Նրանք բոլորը դարբիններ են եւ ամէն կիրակիուտք, աւանդական սովորութեամբ, կռանի հարուածներով ամրացնում են Արտաւազդի շղթաները։ Եւ այդ աւանդական ծէսի մէջ, նա մեծ խորհուրդ է տեսնում. «Մենք ենք պահողը աշխարհքը իր սիւներուն վրայ. մենք ենք որ շղթաներու տակ կը պահենք անհնազանդ որդին, այն ըմբոստ հոգին, որ ճկուիլ չուզեր Աստծու կամքին» (235)։ Ակնյայտօրէն, այս գաղափարները զուգակցւում են Հին Աստուածների Վանահօր պահանջ-յորդորներին։ Դրանք մարդկային զգացմունքներն ու կրքերը բանականութեանը ենթարկելու պահանջներն են, որին հասել են նախնիները՝ երկար ժամանակի ընթացքում։

Սակայն, սա եւս Շանթին վերջնական չի թւում։ Նրան անհրաժեշտ են միթի այլաբանական պատկերներով թափանցել երեւոյթների խորքը՝ սեփական մտայղացման հիմքերը բացապարզելու նպատակով։ Եւ, այստեղ, անխուսափելի է դառնում գեղարուեստական պայմանականութեան ներմուծումը. հակառակ դէպքում դրամայի ծաւալը կը կրկնապատկուէր։

Առաջին արարի 5րդ եւ 6րդ պատկերները հանքախորշում ներկայացնում են թզուկներին եւ կեանքի Դեւին։ Այլ կերպ՝ գործողութիւնը երկրի ընդերքում է կատարւում։ Այն խորհրդանշում է երկրի, բնութեան հիմքը։ Իրենց «աշխատանքով», այդ էակները սնում են կեանքի գոյութեան բոլոր ձեւերը։ Նրանք են «ակը կենդանական», հետեւապէս՝ իրենց բնոյթով են պայմանաւորում ամէն կարգի էակների գոյակերպը։

Հասարակական կեանքի, անհատի վրայ տարածելով բնական-կենսաբանական օրէնքների զարգացումը, հասարակութիւնը դիտելով իբրեւ ամբողջական օրգանիզմ, Շանթը կենսակերպի հիմքում դնում է կեանքն առաջ տանող ոյժը։ Բնութիւնը զարգացման, առաջընթացի ուրիշ լծակ չի ստեղծել։ Համընդհանուր շարժումը ներքին էներգիա է ստանում հենց բնութիւնից. «Ե՛ս եմ կռուի շունչն ու ոգին, կռուին, թափին ու մրցանքին. հի՛մքը ամեն արարչութեան, զարգացումի ու վարչութեան, բաղդի, տիրման, վայելչութեան» (241)։

Ստացւում է, որ կեանքի Դեւը խորհրդանշում է էվոլիւցիոն առաջընթացի հիմնական, գերակայ սկզբունքը՝ գոյութեան կռիւը։ Եւ մարդը, իբրեւ կենդանական աշխարհի ներկայացուցիչ, ենթակայ է այս գերագոյն սկզբունքին։ Նրա կեցութիւնը ձեւաւորուել եւ ձեւաւորւում է բնութեան նախնական կերպերին մօտ սկզբունքներով։ Թզուկների նոր սերունդը գոյութեան կռիւը թեժացնում է ամենաժամանակակից մեթոդներով. «Երկաթ տանք մարդուն. մարդիկ արթուն ... դարբնեն սուրը պողպատի, կարմիր արիւնը վոթի» (239)։ Հնադարեան թզուկներն իրենց գործելակերպով երբեք էլ չեն կանխորոշում դէպքերի ընթացքը։ Նրանք երեւոյթները փաստում են իրենց առկայութեան մէջ։ Արիւնը թափելը պարտադիր է եւ անխուսափելի։ Այլ կերպ անհնար է տապալել իշխանութիւնը, որ հաստատուել է բռնի ոյժով. «Հայրս զարկաւ սուրը, բացաւ անոր դռները ու ըսաւ՝ «ես եմ տէրը»։

Եթէ էվոլիւցիոն զարգացման ճանապարհին մի ցեղը արգելք է հանդիսանում մէկ ուրիշի բարձրացմանը, նրա առաջընթացին, ապա հարցերը վճռւում են սրով։ Այստեղ եւս գոյութեան կռիւն իր լրիւ իրաւունքների մէջ է։

Երկրորդ արարի առաջին տեսարանում թուրքերի յուսահատ դիմակայութիւնն է ներկայացւում։ Էմիրը որքան էլ յամառ ու ինքնավստահ լինի «սեփականած» Անին իր ձեռքում պահելու որոշման մէջ, այսուամենայնիւ նա չի կարող այդ նպատակը իրագործուած տեսնել։ Նա այդ երկրի պատմութեան, քաղաքի, նրա պարիսպների իրական տէրը չէ։ Սրանով իրականում, Շանթի ընկալմամբ, աւարտւում է վերափոխութիւնը։ Սա զարգացման առարկայական ընթացք է։ Դրամայի վերջում նորից դրամատուրգն իր հերոսներին յանգեցնելու է այս կէտին։ Իսկ առայժմ նրա նպատակը էվոլիւցիոն զարգացման եւ դրսից պարտադրուած վերափոխումների հակասութիւնները բացայայտելն է, եւ այստեղ արդէն յեղափոխութիւն կոչուածը ո՛չ թէ կառուցողական, այլ քանդիչ դեր է խաղում, որովհետեւ այն ուղղուած է ազգային պետականութեան կարգի դէմ։ Աւերածութիւններն ընդհանուր հասարակական օրգանիզմի զարգացման խոչընդոտ են հանդիսանում։

Պահլաւունի իշխանը, որ ապստամբութեան կազմակերպիչն է ու ոգին, յանկարծ «դառնում» է դէպքերի առաջն առնող ոյժ։ Այդ պահից սկսած, քաղաքական շարժառիթներով են զարգանում իրադարձութիւնները։ Թշնամու դէմ տարած յաղթանակը ոգեւորում, գրեթէ ազդեցիկ ազդակի է հասցնում ամբոխին։ Ցորդում են զգացմունքները։ Ազատութեանը միտուող բնազդները դառնում են աւելի ու աւելի տարածուն։ Շիկացած կրքերը չեն հանդարտւում. դրանք ելք են փնտռում։

Իշխանի յանձնարարականով, մայր եկեղեցու սրբազանը շնորհաւորում է ժողովրդին թուրքի լծից ազատագրուելու համար եւ առաջարկում, որ ամէն մարդ հարկ է, որ անցնի իր սուրբ գործին գլուխը, որ «բարձրացուցեր է ու կը բարձրացրնէ մեր տունն ու ընտանիքը, մեր քաղաքն ու մեր համբաւը» (248)։ Սակայն, միեւնոյնն է՝ օրերով անգործ մնալ գալը բազմութեան սրտոմն է, եւ գործի գնալիս նրանք դժուարանում են՝ «Երկուշաբթի առտու կարդալու գացող մոնթերուն պէս» (248)։ Հարիւրաւոր զինուած մարդիկ չարագոյժ դէմքերով լցուել են փողոցները։ Ռէալ վտանգ կայ հարուստ թաղերի վրայ յարձակումների։ Աշոտ Տայեցին զգուշացնում է Իշխանին՝ սպասուելիք անկանխատեսելի իրադարձութիւններից, քանի որ «ամբոխը միշտ է անասունի պէս, իսկ երբ յուզուած է՝ կը դառնայ գազան։ Խելացի բան չէ այդ գազանը գրգռելը» (250)։

Իշխան Պահլաւունին աւելի վճռականօրէն է տրամադրուած. հարկ է գործել՝ հանգամանքները նկատի առնելով։ Այն պահին, երբ անհրաժեշտ էր գազանը դուրս հանել՝ թշնամու վրայ քշելու համար, ազնուական դասն առաւել պատրաստակամ էր։ Իսկ երբ գործն աւարտուած է, եւ գազանը նորից պէտք է «քառագեղը» դնել, նրանք դարձել են անհամարձակ։ Իշխանը չի երկմտում. պաշտօնի եւ պարտականութեան բերումով իր խնդիրն է համարում կարգը վերականգնելը։

Սակայն, դէպքերի զարգացումը շատ աւելի արագ է ընթանում։ Մինչ մունետիկները փողոցներում կը կարդային Իշխանի հրամանը՝ երթերն արգելելու մասին, նոր կազմուած կառավարութեան ներկայացուցիչները, Ներկարարի գլխաւորութեամբ, վերջնագիր են ներկայացնում Իշխանին։

Այլ խօսքով՝ եկել են ազատութեան օրերը, եւ իշխանական դասը, որ «տուրք է դրել ժողովրդի վզին», պէտք է հեռանայ ասպարէզից՝ տեղը ժողովրդական ուժերին թողնելով։ Հաւաքական ոյժերի նպատակը ստեղծուած կարգի մերժումն է։ Ժողովրդի մէջ դեռեւս թարմ է Նաղաշ Նաթանի կարեւոր եզրայանգումը՝ «անիծուած են այս աշխարհքի բոլոր կարգերը»։ Ցեղափոխութեան կամ վերափոխումների

այս ձեւը, Շանթի ընկալմամբ, կրում է բացառապէս կործանարարքառասային բնոյթ, որի նպատակը, ժողովրդական գայրոյթի, բռնի ոյժի շնորհիւ, քաղաքական վերափոխումների ընթացքում սեփական նիւթական պահանջմունքների բաւարարումն է:

Դէպքերի նման զարգացումը վատնում է հասարակական օրգանիզմի գոյատեւման համար ժամանակի ընթացքում, տարբեր սերունդների կողմից ստեղծած միջոցները:

Աշոտ Տայեցին լաւ է պատկերացնում ահագնացող վտանգը. «Սարսափելի փոթորիկ է փրթելու: Պիտի կորչի որքա՛ն, որքա՛ն աշխատանք, ինչքա՛ն հարստութիւն, ինչքան ջա՛նք ու ծրագիր...» (253):

Համընդհանուր ոգեւորութեան մէջ, Դարբինն առայժմ խօսում է «հանուրի» շահերից, որպէսզի զրկուածներն ու անիրաւուածները «բարելաւեն» իրենց վիճակը: Առաջնորդը յայտարարում է յաջորդ ճշմարտութիւնը. «Անիի քաղաքացիներ՝ ինչ որ ունին այս մարդիկը, իրենց բոլոր դիզած ոսկին, ինչքն ու կալուած, իրենց բոլոր ստացուածքը, բոլո՛ը ձե՛րն է...: Պէտք է ե՛տ առնել անոնց ձեռքէն, պէտք է ե՛տ խլել մեր աշխատանքը» (258): Դարբինը վերածւում է կատարեալ բռնապետի՝ ամէն ինչին տիրելու, ամէն ինչի իշխելու, ամէն ինչ ունենալու բնազդով:

Երրորդ արարում, թերեւս աւելի քան միւսներում, առօրէական տեսարաններին յաջորդում են խորհրդանշական, նաեւ ենթատեքստով հարուստ պատկերներ: Դրամատուրգը երեւոյթների մէջ տեւականը գտնելու նպատակն ունի:

Իշխանութեան վերին օղակներից դուրս մնացած մարդիկ ամբողջացնում են «վիրաւորուածների», «չգնահատուածների» գունդը, որտեղ ներքին պայման է դրւում՝ յաջողութեան, այսինքն՝ Անիի կառավարութիւնը Ներկարարի ձեռքն անցնելու դէպքում, վերջինս կը շարժուի «մերժուածների» սրտով ու բարեկամութեամբ:

Երկի գաղափարական բովանդակութեան համար խիստ կարեւոր է Հարճի եւ Նաղաշի երկխօսութեան տեսարանը: Ընթերցող-հանդիսատեսը բաւականին քիչ է տեսնում այս հերոսին: Նրա խօսքերի, քարոզի իմաստը պարզւում է աւելի շրջապատի մարդկանց բացատրութիւնների, ասելիքի մէջ: Եթէ առաջին արարում այս գործող անձը համոզուած էր, որ Արտաւազդը կռիւ էր եւ վրիժառութեան մարմնացում, ապա երրորդ արարում էականօրէն փոխուել են նրա հայեացքները: Նաղաշը չի կարող ապրել այդ իշխանութեան հովանու տակ, որովհետեւ նրա քարոզած ճշմարտութիւնը, որ հիմքում խիստ արմատական էր («անիծուած են բոլոր կարգերը»), չիրականացաւ եւ սխալ էր: Հետեւապէս Արտաւազդի, իբրեւ կործանող ոյժի գաղափարը, ոչ միայն չի կարող բարելաւել սնանկների ու խեղճերի վիճակը, այլեւ կա-

*ղող է ծանրացնել դրութիւնը։ Հարճի հետ զրոյցի ընթացքում, Նաղաշը չի կարող խոստովանել, որ իրականում Արտաւազդի յայտնութիւնը, իբրեւ կործանող ոյժ, արդէն կատարուել է։ Արդիւնքում, ստացուել է մի նոր բռնապետութիւն, միայն՝ այն տարբերութեամբ, որ այսօր, մարդիկ ճնշւում են իրենց երէկուայ ընկերներից։ Նաղաշը հասկացաւ, որ պետականութեան դէմ մղուող պայքարը, հիմքում ծանր հետեւանքներ ունի։ Ազատութիւնն ամէն ինչից վեր՝ գոյութիւն չունի, գոնէ առայժմ։ Մարդկային բնազդները, որոնք բանտուած են, եթէ ազատ արձակուեն, ապա կարող են ծանր հետեւանքներ ունենալ։ Մարդն էութեամբ դեռեւս չի հասել այն աստիճանին, որ կարողանայ չիշխել իրենից թոյլի վրայ եւ վեր կանգնել եսասիրական բնազդներից։*

*Շանթն այս պատկերով մէկ այլ կարեւոր եզրայանգում է կատարում. հեթանոս ժամանակների Արտաւազդն այլեւս անցեալ է։ Իբրեւ ազատութեան խորհրդանիշ բանտուած գաղափարներն, իրականութեան մէջ, կործանել են իրենք իրենց։ Նոյնիսկ պատահական չէ, որ Հարճը՝ ամէնից աւելի զգացմունքներին տրուող հերոսուհին, ամէն կերպ խնդրում է Նաղաշին «դառնալ» Արտաւազդը՝ քանդելու համար։ «Եղիր ի՛նքդ Արտաւազդը, եղիր հի՛ն Արտաւազդը, եղիր ի՛մ Արտաւազդը» (268)։ Հարճը որոշակիօրէն խորհրդանշում է հեթանոս ժամանակը։ Նրա բացարձակ ազատութեան միտուող ձգտումներն իրականութիւն չէին կարող դառնալ։*

*Ժողովրդի իմաստութիւնը կռանով ամրացրեց Արտաւազդի շղթաները յետագայ դարերում, քանի որ նրա յայտնութիւնը ծանր հետեւանքով էր յղի։ Հետեւապէս, Շանթը ո՛չ թէ փորձել է ժողովրդի իմաստութեանը հակառակ սեփական տեսութիւն ստեղծել, ինչպէս ենթադրում է Փանոսեանը*[19]*, այլ բացայայտում է միֆի փիլիսոփայական ենթատեքստը։ Տեւական ժամանակի մէջ, այն փոփոխութեան է ենթարկուել։ Ժողովրդի իմաստութիւնը Արտաւազդին փակելու էր քարայրում, քանի որ, նրա յայտնութեամբ, մարդը ձերբազատւում է ամէն կարգի պարտականութիւններից եւ դրսեւորում է կենդանական հակումները։ Ժամանակ է պէտք, որ մարդկային ցեղը գաղափարն ըստ էութեան գործադրել կարողանայ։*

*Նաղաշը եւս իր մէջ կենտրոնացնում է տարբեր ժամանակները։ Այն պահին, երբ մանուկ էր վիշտը եւ բողոքը՝ երեխայ, նա եւս, ինչպէս Հարճը, համոզուած էր, որ Արտաւազդը վրէժի մարմնացումն է։ Ժամանակ է պէտք, որպէսզի հասկանան, որ «քանդելը եռուն արեան ու խակ մտքի պահանջ է...։ Հասած հոգին, հասուն դժգոհութիւնը նորել կը տենչայ, շինել, ստեղծել» (267)։*

*Հարճը, թէեւ տարբեր ժամանակների մարմնաւորում է, սակայն չունի Նաղաշի գաղափարական կշիռը։ Նրա մաքառումներն անձնա-*

կան նպատակներ են հետապնդում։ Նրան ի՞նչ՝ թէ Նաղաշը ապագայի մէջ է փնտռում լոյսը. նրան այսօր է պէտք այդ ազատութիւնը, հենց հիմա։ Նա լաւ է բնորոշում իր երբեմնի իդէալ հերոսին, որն էլ դառնում է երեւոյթի ներքին հակասութեան արտայայտութիւնը. «Ուրիշի ազատութիւնը քո շղթան է»,- ասում է Հարճը Նաղաշին (268)։ Հերոսուհու դիտարկումը կապուած է ժամանակակցի էութեանը, եւ առանձին անհատի ազատութեան ձգտումը հակադիր է հերոսի՝ հանուրի համար իրականացուող ջանքերին։

Եւ քանի որ հերոսը լաւ գիտէ մարդու բնոյթը, որ երկակի է, որտեղ թերեւս աւելի արարածին բնորոշ յատկութիւններ կան, քան արարչին, ուրեմն շատ երկար ու դժուարին է անցնելիք ճանապարհը։ Աստուած դեռեւս չի աւարտել իր ստեղծագործութիւնը. «դուք դեռ մարդու մէկ նախնական նմուշն էք միայն, Աստծու առաջին փորձերը անասունէն մարդը ստեղծելու» (270)։

Ակնյայտ է Նիցշէի փիլիսոփայութեան ազդեցութիւնը Շանթի դրամայի վրայ։ Նոյնիսկ հերոսի արտայայտուելու կերպը՝ իբրեւ քարոզիչ, սեփական դիտարկումների մէջ վստահ ու անառարկելի, առանձին պատկերների ընդհանրութեան առումով յիշեցնում են Զրադաշտին։ Եւ ինչպէս Զրադաշտը, այնպէս էլ Նաղաշը ճշմարտութեան համար պայքարող մարտիկի խորհրդանիշն է։ Նա ապագայի մարդն է, որ հեռւում է թողել մարդ-արարածի ժամանակն իր կեցուածքով ու արատներով։ Նա մեծ քարոզիչ է, մարդկութեան դաստիարակը։

Նիցշէի փիլիսոփայութիւնը յաճախ ստանում է դիցաբանականի, առասպելականի արտայայտութիւն։ Այն յաճախ կառուցւում է խօսքի հատուածների եւ աֆորիզմների բեկորներից։ Դրանք դրսեւորւում են որպէս բազմաշերտ խորհրդանիշեր։

Եւ ինչպէս Զրադաշտն իրենից խուսափող պատանուն է ասում, թէ «մենք ամէնից շատ անտես ձեռքերից ենք տանջւում ու թեքւում»[20], այնպէս էլ Նաղաշը հիմնական բռնակալին անտեսանելի է համարում. «դուք կը սիրէք դուրսի բռնակալները, որոնց դէմ կարելի է բողոքել, աղմկել, կրճտել ու դաւել։ Բայց ես կ'ըսեմ ձեզի. հո՛ն է, հո՛ն, ձեր հոգիներուն թաւ խաւարին մէջ թափառող այն հզօր, այն անզուսպ բռնակալը» (270)։

Իսկ Նիցշէի մօտ, «դէպի ազատ բարձունքներն ես ձգտում դու, աստղերի ծարաւ քո հոգին։ Սակայն քո վատ հակումներն էլ են ծարաւում ազատութեան։ Քո վայրենի շները ձգտում են ազատուել. նրանք հաչում են հաճոյքից իրենց նկուղում, երբ քո ոգին բոլոր բանտերի դռները բացել է ջանում»[21],- ասում է Զրադաշտը պատանուն։

Շանթը տրոհում է մարդու էութիւնը նիւթականի (բնութեան) եւ աննիւթականի (ոգու)։ Դրանց միջեւ եղած պայքարը ներկայացւում է

Կեանքի Դեւի եւ շղթայակապ Արտաւազդի կերպարներով։ Դրամատուրգը կիրառելով իր համար արդէն նախընտրած արտայայտման ձեւը, հայելային շրջուած արտացոլքի ճանապարհով հասնում է ընդհանրացումների։ Իրականում, ինչպէս մարմինն ու հոգին, նիւթականն ու ոչ-նիւթականը մշտապէս հակադրամիասնութիւն են կազմում, նոյնն է Կեանքի Դեւի ու Արտաւազդի պարագայում։ Դրանք, իբրեւ հակադիր ոյժեր, խորհրդանշում են մարդ արարածի էութեան հակադիր, սակայն միասնական կողմերը։ Սակայն Շանթի համար ամէն ինչ պարզունակ չէ։ Ամէն ինչ յարաբերական է. ո՞րն է բարին եւ ո՞րը՝ չարը։ Կեանքի Դեւը, որ բնութիւնն է, նրա արտայայտման, զարգացման ձեւերի ամբողջութիւնը, գոյութեան պայքարն ընդհանրապէս, հազարամեակների ընթացքում ստեղծելով սեփական առաջընթացի ճանապարհ եւ զարգացման ոյժ, դառնում է - որքան էլ պարադոքսալ է - բարի։ Կեանքի գոյութեան պայքարն է առաջ մղում մարդկութեանը, իսկ Արտաւազդը, որն ազնիւ է, դառնում է չար, քանի որ դրսեւորում է եւ իր վատ հակումները։

Կեանքի Դեւը իրեն երկրի զաւակ է համարում, իսկ Արտաւազդին՝ մարդու որդի։ Բնութիւնը ներառում է եւ մարդու որդուն։ Նրա մղումները թէեւ միշտ վերերկրային են, սակայն նա մշտապէս ենթակայ է բնութեանը. «մարդն էլ հասարակ կենդանի մըն է եւ յաւիտեան հպատակ ինծի» (273)։ Դեւի գայթակղիչ առաջարկները՝ «Կեանքի կռուին բոլոր զէնքերը քեզի ու քու հպարտութեանդ, որ ընկճես, տիրես», Արտաւազդը պատասխանում է մերժումով. «Այս շղթաները փշրելու համար պիտի գայ նո՛ր ցեղ ու նո՛ր ձեռքեր։ Քու ձեռքերդ կարող չեն» (274)։ Պատասխանը դիպուկ է, բնութիւնը չի կարող այդ անել։ Ապագայի մէջ, արդէն բնութեան ախտերն իր մէջ յաղթահարածը կը կարողանայ ազատագրուել շղթաներից եւ վերածնուել իբրեւ նոր մարդ։ Այդ նպատակը բաւականին հեռու է եւ, ինչպէս նորօրեայ քարոզիչը՝ Նաղաշն էր ասում, «դեռ երկար, դեռ շատ է երկար այն ճամբան, որ քալէք պիտի» (269)։

Մարդը դեռեւս սեփական բնական էութիւնից ելնելով՝ պատրաստ չէ ազատութեան գաղափարն ընդունել որպէս իրականութիւն։ Աւանդական ընկալմամբ, նա առայժմ ամրացնում է Արտաւազդի շղթաները. «Կը լսուի կռանահարութեան զարկեր, որոնք կը հեծեն կամարներուն տակ. կը շաչեն Արտաւազդի շղթաները. շներու կլանչ» (274)։

Այդ սերունդը, Նիցշէի եւ Շանթի ընկալմամբ, բարի է։ «Հինն է կամենում բարին եւ որ հինը պահպանուի»,- գրում է Նիցշէն[22]։ Եւ պատահական էլ չէ, որ Շանթի դրամայում հինը պահպանող մարդիկ բարի են։ Ըստ Նիցշէի, «մի նոր բան է կամենում ստեղծել Ազնիւը եւ մի նոր առաքինութիւն»[23]։ Նաղաշ Նաթանի, շրջապատում ունեցած

համայքի պատճառներից մէկը, նրա ազնուութիւնն է, իսկ նոր առաքինութեամբ հանդէս գալը գայրոյթ է պատճառում մարդկանց։

Նիցշէի մէկ այլ կարեւոր եզրայանգման ոգով է զարգանում յետագայ գործողութիւնը. «այն չէ սակայն Ազնիւի վտանգը, որ նա բարի կը դառնայ, այլ երբ նա յանդուգն, ծաղրող, ոչնչացնող դառնայ»[24]։

Պարզ է, որ առաջընթացի չափանիշն ու նպատակն այլեւս սոցիալական բնոյթ չունեն, այլ էթիկական։ Եթէ հասարակական կարգի փոփոխութեան նպատակը անձնական, նիւթական շահերի պաշտպանութիւնն է, որն անտեսում է ընդհանուր հասարակական օրգանիզմի զարգացումը, ուրեմն վերափոխութիւնը ստանում է կործանող, ոչնչացնող բնոյթ։ Քաղաքական կարգը փոխելուն ուղղուած ձեռնարկումները, որոնք անտեսում են զարգացման օրինաչափութիւնները եւ անձնական շահառութեան նպատակներ են հետապնդում, ամբողջութեամբ քանդում են նախկին կապերը եւ հասարակութեանը պատճառում են բարոյական, ծանր վնասներ։ Իսկ ամենամեծ եւ հետեւանքներով լուրջ խնդիրն այն է, որ մարդիկ այլեւս չեն ենթարկւում ընդունուած կարգին եւ օրէնքին։

Փողոցում յայտնւում են խմբեր, զանազան արհեստի աշակերտներ, օգնականներ՝ տաս տարեկանից մինչեւ հասուն տարիք ունեցողները։ Զգտումների մէջ ամբոխը դառնում է աւելի ու աւելի արմատական։ Համընդհանուր անկարգութեան մթնոլորտում («Նամարտ է ով երթայ գործի։ Նամարտ է ով երթայ գործի»), ծնւում է հաւասարութեան պահանջը։

Հետաքրքիր է Սողոմոնի կերպարը։ Նա երիտասարդ է, խիստ նուրբ ու քնքոյշ կազմով, գրեթէ աղջկայ գեղեցկութեամբ. աչքերը վառւում են, ձայնը՝ մշտապէս յուզուած։ Նա հանդէս է գալիս որպէս արմատական մարդասէր։ Նրա պահանջ-ելոյթներն առնչւում են կոնկրետ ժամանակներին. «Ամենքս կ'աշխատինք, ամէն մէկս մեր տարիքին ու կարողութեան համաձայն, ուրեմն հաւասար ենք ամենքս։ Սա յանցաւո՞ր է, որ դեռ տղայ է, կամ ա՞ն, որ դեռ սեփական իր գործը չունի» (278)։

Նիցշէի «Ազնիւը» ձեռնարկումներով դառնում է առաւել վճռական, չզիջող ու լպիրշ։ Հաւասարութեան քարոզներն անտեսում են դարերով բնութեան կողմից ձեւաւորուած անհաւասարութիւնը։ Սողոմոնի իմաստութիւնը, երեւոյթների վերլուծութեան մէջ, պարզունակ է ու չիրականացող։ Ամէն մէկի կատարած աշխատանքը բնոյթով տարբեր է։ «Ամեն արհեստ ու արուեստ հաւասար հասոյթ չի բերեր ու չի կրնար բերել. եւ նոյն գործը ամէն մարդու ձեռքին մէջ հաւասար արդիւնաբեր չէ»[25],- գրելու էր Շանթը՝ 1923ին Պոսթոնի Հայրենիք ամսագրում տպուած «Անհաւասարութիւնը Ընկերային Կեանքին

Մէջ» յօդուածում։ Հետեւապէս, ինչպէ՞ս կարելի է ջանասէր եւ ընդունակ աշխատաւորի ձեռքից վերցնել արդիւնքը եւ տալ նուազ աշխատողին կամ չաշխատողին։ Այս առումով, «համայնատիրութիւն կամ ստացուածքի հաւասարութիւն ... կը նշանակէ ծոյլերու ու գէշ աշխատողներու թագաւորութիւն»[26], շարունակում է Շանթը։ Նմանատիպ երջանիկ համայնատիրական թագաւորութիւն, որտեղ, Շղթայուածքի Սողոմոնի համոզմամբ, ինչ ուզենաս՝ քոնն է («Խանութը մեզի, ապրանքը մեզի, բոլոր շահը մեզի»), հրապարակախօս Շանթի համար «կը նշանակէ լիակատար սանձարձակութիւն եւ կը պահանջէ վայրենի ու նախապատմական մարդուն յատուկ կենցաղ ու հոգեբանութիւն»[27]։

Խիստ կարեւոր են Շղթայուածքի այն դրուագները, երբ հանդիպում են, վերջին անգամ, Նաղաշն ու Իշխանը։ Այս հանդիպումն արդէն, միֆի վերաիմաստաւորման ճանապարհով, կատարուել էր Կեանքի Դեւի եւ Արտաւազդի միջեւ, եւ ելքը պարզ է։ Պահլաւունին պատրաստ է ազատ արձակելու մարգարէին, եթէ վերջինս նախապէս ընդունի առաջարկուող պայմանը։ Իշխանը եկել է վերահաստատելու ընդհանուր կարգն ու կանոնը, բայց հոգիների մէջ Նաղաշի ձգած շփոթը կարող է վերացնել հենց ինքը՝ գաղափարախօսը։ Ժողովուրդը դարեր շարունակ Արտաւազդին անհնազանդ, մեծամիտ արքայորդի է համարել, «նախանձոտ ու անիծուած զաւակ մը» (288), որ արդար պատիժն է կրում Մասիսի խորքերում։ Նրա դուրս գալն Իշխանի համոզմամբ չար սպառնալիք է մարդկութեան համար, «խանգարում կեանքի կարգ ու կանոնին» (288)։ Հետեւապէս, Նաղաշը պարտաւոր է ասելու այն, ինչ ասել է ժողովուրդը դարեր շարունակ։

Ազատութեան մունետիկը ոչ մի խօսք չունի ասելու։ Նա պահանջում է նորից իր ձեռքերը շղթայեն։ Նա չի կարող հրաժարուել նուիրական գաղափարից։

Միմեանց են հանդիպադրում Իշխան Պահլաւունին եւ Նաղաշ Նաթանը։ Դրանք իրականում մարդկային էութեան հակադիր դրսեւորումներ են եւ փոխկապուած են միմեանց։ Մտքի եւ սրտի, հոգու եւ մարմնի յաւերժական հակադրամիասնութիւնն է առաջ մղում կեանքի ընթացքը։ Իշխանը բանականութեան կրողն է, որն ընդհանուր քաոսը վերածում է որոշակի կառոյցի։ Նաղաշը ոգու, զգացմունքի կրողն է, որը երբեք չի մեռնում եւ յարատեւելու է մարդկութեան հետ։ Նրա մղումները, խօսքը «մեր բոլորի հոգիներէն է որ կու գայ, եւ քո՛ւ, եւ քու հոգիէդ, չէ՞ որ դուն ալ մարդ ես»,- ասում է Հարճն Իշխանին (287)։

Բանականութիւնը (Իշխանը) փորձում է հոգին (Նաղաշը) ենթարկել իրեն. չէ՞ որ այդ կինը (Հարճը), որ եկել է քեզ (այսինքն՝ Նաղաշի) համար ազատութիւն մուրալու, շատ գեղեցիկ է. կ՚ապրես Իշխանա-

վայել, վայելքդ անպակաս չի լինելու։ Մարդը միայն մէկ անգամ է ծնուում, վերցրու այն, ինչ բախտը հրամցրել է քեզ, «եթէ յիմար չես» (289)։ Բայց այս եկաթեայ տրամաբանութեան դէմ ըմբոստանում է ոգին՝ զգացմունքի, խղճի կրողը՝ Նաղաշը, որ իրականում ոչ մի բան չի արտասանում, սակայն կամովին նախընտրում է խարոյկը։ Ճիշտ է, նա իբրեւ անհատ չի գտնելու իր բարեկեցութիւնն ու երջանկութիւնը, սակայն ի՜նչ մեծ երջանկութեան զգացողութիւն է նրա համար, որ ինքը լոյս է փնտռում ե՛ւ ուրիշների, ե՛ւ իր համար։

Շանթը հանդիպադրում է տարբեր ժամանակները։ Իշխանը, իբրեւ բանականութեան կրող, խիստ պրագմատիկ է. այսօր իւրաքանչիւր մարդու տրուող ազատութիւնը չպիտի գերազանցի դիմացինին տրուած ազատութեան սահմանը։ Բնականաբար, անհատականութեան այս խիստ սահմանափակումն անիմաստ կը լինէր առանց պետական կարգի պահանջմունքների։ Կանտի համոզմամբ, մարդկութեանը ներկայացուող հիմնական պահանջը այս էթիկական նպատակն է, որին միտուած է պատմութեան զարգացումը։ Ներդաշնակ հասարակութեան, համընդհանուր միասնութեան, համաձայնութեան հասնելու համար, հասարակութիւնը դեռ երկար պիտի քայլի։ Նպատակը դեռեւս հեռու է, իսկ ճանապարհը՝ բռնութիւններով, աւերներով լի։

Նաղաշի մղումը չի կապուում կոնկրետ ժամանակին կամ պետականութեան գաղափարին։ Հետեւաբար, նպատակը բռնութեան յաղթահարումն է։ Նա կողմ է վերին ճշմարտութեանը, մինչդեռ Իշխանը հարկադրուած է նկատի առնել կեանքի ճշմարտութիւնը։

Ցաւերժ է բնութիւնը։ Նրա զարգացումն առաջ է ընթանում գոյութեան կռուի պահանջներով։ Առայժմ, ուրիշ, աւելի նպատակայարմար ձեւ չկայ կեցութեան առաջընթացի համար, թէեւ ամէն կերպ մարդու ոգին բնութիւնից վեր է միտուած։ Առայժմ, սակայն, մարդկային ոգին ինքնին հակադիր է նրա եսասիրական էութեանը։ Մարդկութիւնը տարուբերուում է հակասական, իրարահալած ոյժերի դաշտում։ Այս վիճակը, որ ինքնին դրամատիկ բնոյթ ունի, շարունակուելու է այնքան ժամանակ, քանի դեռ մարդկութիւնը չի հասել համընդհանուր ներդաշնակ վիճակի։

Դրամայում արտայայտուած կերպարները բնաւորութիւններ չեն. դրանք այս կամ այն փիլիսոփայական ընկալումների, առանձին պահերին՝ տիպական գծերի համադրութեամբ ստեղծուած գործող անձինք են։ Եւ խօսել նրանց արարքների հոգեբանական հիմնաւորուածութեան մասին՝ պարզապէս սխալ է։ Դրամատուրգը դրա նպատակը չի էլ ունեցել։ Նա գեղարուեստական ինքնատիպ ձեւի մէջ է դրել մարդու եւ հասարակական կեանքի մասին ունեցած բարոյա-փիլիսոփայական գաղափարները։ Այս է պատճառը, որ գործողութիւնը զարգա-

նում է ո՛չ թէ ֆաբուլային, այլ գաղափարների զարգացման տրամաբանութեամբ։ Հերոսներն աւելի մարդկային բանականութեան, զգացմունքների, կրքերի խտացում-խորհրդանիշեր են։ Եւ եթէ անգամ խօսւում է հոգեբանական կամ բնաւորութեան գծերի բացայայտման վերաբերեալ, ապա Շանթը դրանք եւս ներկայացնում է դրամայի գաղափարին համապատասխան։ Բնութեան կողմից տրուած շնորհներն են ձեւաւորում նրանց հոգեբանութիւնը։

Իշխան Պահլաւունին յիսունին մօտ, առոյգ ու խոհուն մարդ է։ Բնութիւնից օժտուած է ուժեղ կամքով ու շրջահայեացութեամբ։ Նա երբեք չի կարող հանդուրժել օտարի լուծը։ Թէեւ Էմիրը նրա ձեռքին «խաղալիք էր», «կը դարձնէի ինչպէս ուզէի», սակայն դա չէր կարող գոհացնել նրան, ուստիեւ նա տապալեց բռնակալին։ Մնաց թէ ինքը ենթարկուի մի խումբ ռամիկ ու սինլքոր խառնակիչների։ Այլ կերպ, նա ուժեղ է իր հմտութեամբ, խելքով, կազմակերպչական տաղանդով։ Հետեւապէս, նա է վարելու երկրի գործերը։

Այս առումով կարեւոր են երկրորդ արարում, երկրորդ տեսարանի վեցերորդ դրուագում, Իշխանի կնոջ՝ Իշխանուհու բնութագրումները։ Նա արտայայտւում է իբրեւ կին, իբրեւ մայր, որին անհանգըստացնում է զաւակի ճակատագիրը։ Իշխանուհու առաջադրած ճանապարհը լուծելի է զուտ անձնական կեցութեան խաղաղութեան համար, որն ի վերջոյ հնարաւոր էլ չէ անկայուն իրադրութեան պայմաններում։ Նա գիտէ, որ ամուսինը քաջ է, բայց ինչո՞ւ նա պիտի ենթարկուի այդ ստրուկներին. «թող ժողովուրդը ինքը գայ իյնայ ոտքերդ քու իմաստութիւնդ ու քու բազուկդ քեզմէ խնդրելու, իսկ եթէ չեն գար ու չեն խնդրեր՝ թող այդ դժբաղդները իրենց ցաւին, իրենց կուռին ու ճաշակին. իրենց արիւնը իրենց գլուխը» (254)։ Իշխանուհին ներկայացնում է եսասիրութեան միւս երեսը։ Թեւերը ծալած նստելն անհնարին է, եթէ դրանք հզօր եւ կարող ձեռքեր են։

Տուեալ պարագայում գրողի համար կարեւորւում են զուտ բնութիւնից տրուած անհատական որակները։ Դրանք եւս անհաւասարութիւն ստեղծելու նախապայմաններ են։ Ուրիշ մէկը չունի Պահլաւունու առաւելութիւնները, հետեւապէս՝ ենթարկուելու է նրան՝ յանուն համընդհանուր կարգ ու կանոնի։

Հետաքրքիր է վրացի Գնդապետի դիտողութիւնը՝ կապուած Պահլաւունու խօսելաձեւի հետ։ Ընթերցողը չգիտէ, թէ Իշխանը վրաց թագաւորի պալատում ի՛նչ կերպ է արտայայտուել, բայց այստեղ՝ Անիում, Գնդապետին դուր չի գալիս Պահլաւունու ինքնավստահ կեցուածքը. «Կը տեսնե՞ս խօսուածքը, շեշտը, ինքգինքը պահելը։ Մցխեթի պալատին մէջ բոլորովին ուրիշ տեսակ էր։ Աքլորը քաջ է իր բունին մէջ» (284)։ Մարդն արդէն քաղաքի տէրն է եւ ո՛չ այնտեղից հալա-

ծուած մէկը։ Նա կարողացել է վերջ դնել անկարգութիւններին եւ դէպքերն ուղղորդել բնական հունով։ Պարզ է, որ հոգեբանօրէն այլ մարդ է, եւ դա չի վրիպում վրացի Գնդապետի աչքից։ Շանթը ո՛չ թէ հիմնաւորել է այս, այլ պարզապէս նկատել, որ հասարակական դիրքը, որին հասել է Պահլաւունին, իր անձնական որակների շնորհիւ, նրան հոգեբանօրէն այլ մարդ է դարձնում։

Մնացած կերպարները գրեթէ չեն մօտենում երեւոյթների կոնկրետ ձեւերին։ Դրանք տիպական են իրենց պայմանականութեան մէջ։

Հայ գրականութեան պատմութեան մէջ, Ի. դարի առաջին քառորդում տեղի ունեցած վերափոխումների վերաբերեալ գեղարուեստական առումով բարձրարժէք երկ է Մաթեւոս Դարբինեանի «Կիկոսը» վիպակը[28]։ Սատիրայի հասնող ծաղրով առանձնանում է եւ Երուանդ Օտեանը՝ Ընկեր Փանջունիով։ Ի հարկէ, նրանք այլ խնդիրներ էին առաջադրում։ Շանթը դասակարգային պայքարը, յեղափոխութիւնը քննում էր փիլիսոփայական-մարդաբանական հայեացքների ընդհանուր լոյսի ներքոյ։ Դարաշրջանին բնորոշ հարցերը նա առնչում էր յաւերժական խնդիրներին։

Եւրոպական դրամատուրգիայում թերեւս բելգիացի բանաստեղծ ու դրամատուրգ Էմիլ Վերհարնի (Emile Verhaeren, 1855-1916) *Արշալոյսներ* (*Les aubes*, 1898) դրաման առանձին պատկերներով յիշեցնում է *Շղթայուածը*։ Ամբոխը զայրոյթի պահին տապալում է ամէն ինչ։ Այստեղ եւս, յեղափոխութեան շարունակութեան կոչերն ու գործելակերպն առկայ են։ Ամբոխը ոգեւորութեան պահին վեր է հանում առաջնորդին՝ տրիբուն Էրենիէնին, որպէսզի դրան հետեւի արհամարհանքն ու թշնամութիւնը։ «Հիացմունքից եւ էնտուզիազմից անմիջապէս յետոյ թշնամութի՞ւն եւ ատելութի՞ւն»[29], զարմանում է դրամայի հերոսներից Կլէրը։ Այստեղ եւս, ինչպէս *Շղթայուածը*ում, մարդկանց մի մասը կողմնակից է խաղաղութիւն-հանդարտութեանը, միւս մասը՝ կռուի թեժացմանը, բռնութեամբ իրենց ճակատագրին տէր լինելու սկզբունքին։ Վերհարնի դրամայում եւս մեծ տեղ է գրաւում պայմանականութիւնը։ Դէպքերը տեղի են ունենում «Մեծ Քաղաք»ում։ Սակայն զուտ հոգեբանական բացայայտումների առումով, դրողն առաւել մօտ է ռէալիստական արուեստին ներկայացուող պահանջներին։ Էրենիէնը ծանր դրամա է ապրում։ Նա կարողանում է կառավարութեան անունից խոստումներով հանդարտացնել շիկացած կրքերը։ Յետագայում, իշխանաւորները չեն կատարում խոստումների մի մասը։ Մարդիկ այլեւս չեն հաւատում տրիբունին։ Նա սպանւում է գործ-

ընկերոջ եւ բարեկամի կողմից: Նման երեւոյթներ կան եւ Շղթայուածքում:

Արշալոյսներում ոգեւորուած ամբոխը տապալում է Իշխանութիւնը ներկայացնող արձանը՝ այն դիտելով որպէս բռնութեան խորհրդանիշ: Վերջում թէեւ դէպքերն ստանում են ողբերգական հանգուցալուծում, սակայն ամէն ինչ աւարտւում է յեղափոխական օպտիմիզմի փառաբանութեամբ:

Շանթը չի ընդունում վերեւից եկած յեղափոխութիւնը: Վերափոխումներն անհրաժեշտ են, սակայն դրանք պէտք է իրականացուեն զարգացման առարկայական օրէնքների հաշուառումով: Հակառակ դէպքում՝ դրանք միայն ժամանակաւոր բնոյթ կարող են կրել:

Տուեալ պարագայում, Վերհարնի դրամայի յիշատակումը մեզ համար կարեւորւում է նրանով, որ Շանթը ծանօթ էր ո՛չ միայն գերմանական դասական փիլիսոփայութեանը, այլեւ եւրոպական գրականութեանը, նրա գեղարուեստական նուաճումներին: Դրանց ստեղծագործաբար իւրացումը ո՛չ թէ ճնշում, այլ առաւել համարձակ էր դարձնում գրողին: Շանթը վերաստեղծում էր գեղարուեստա-փիլիսոփայական ինքնատիպ աշխարհ, որն յենուած էր ինչպէս իր ժողովրդի դարաւոր կենսափորձի, այնպէս էլ համաշխարհային մշակոյթի ձեռքբերումների վրայ:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Սիմէոն Յակոբեան, «Գեղարուեստական Մոլորութիւն», Արեգ (Վիեննա), Յունիս 1922, էջ 358-367:

[2] Յակոբ Օշական, Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան, Ութերորդ Հատոր. Արուեստագէտ Սերունդ, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1980, էջ 328:

[3] Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա, Մ. Աբեղեանի Անուան Գրականութեան Ինստիտուտ, Հայ Նոր Գրականութեան Պատմութիւն, հատոր հինգերորդ, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1979, էջ 864:

[4] Նոյն, էջ 866:

[5] Սարգիս Փանոսեան, Լեւոն Շանթ, Երեւան, 1992, էջ 296:

[6] Սերգէյ Սարինեան, Լեւոն Շանթ, Երեւան, 1990, էջ 154:

[7] Լեւոն Շանթի Երկերը, Հինգերորդ Հատոր. Ընկերաբանական Ու Գրաբանական Հարցեր, Պէյրութ, Տպարան Հայ Ճեմարանի, 1948, էջ 38-39:

[8] Նոյն էջ 39:

[9] Նոյն, էջ 41:

[10] Նոյն:

[11] Rodonachalniki Pozitivizma [Պոզիտիւիզմի Նախահայրերը], պրակ 5. Օգիւստ Կոնտ, Սանկտ Պետերբուրգ, 1912, էջ 28:

[12] 'Osnovaniia sotsiologii' [Սոցիոլոգիայի Հիմունքները], տե՛ս՝ Sochineniia G. Spensera [Հ. Սպենսէրի Երկերը], հատոր 2, Սանկտ Պետերբուրգ, 1898, էջ 284:

[13]Nitsshche [Friedrich Nietzsche], *Sochineniia v dvukh tomakh* [*Երկեր երկու հատորով*], *հատոր 2, Մոսկուա*, 1990, էջ 8։

[14]*Լևոն Շանթի Երկերը, Երրորդ հատոր. Գեղարուեստական Գրուածներ 1909-1921, Պէյրութ, Տպարան Հայ ճեմարանի*, 1947, էջ 270։ *Այսուհետեւ, Շղթաթուածքի այս հրատարակութիւնից կատարուած մէջբերումների յղումները կը տրուեն տողում փակագծերի մէջ։ Կատարուած բոլոր ընդգծումները մերն են։*

[15]*Պիոն Ցակոբեան, «Աւ. Իսահակեանը եւ Սա. Զօրեանը «Սասունցի Դաւիթ» էպոսի Համահաւաք Բնագրի Մասին», Լրաբեր Հասարակական Գիտութիւնների, թիւ 8*, 1980, էջ 100-101։

[16]*Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա, Պատմութեան Ինստիտուտ, Հայ Ժողովրդի Պատմութիւն, հատոր* III, *Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն*, 1976, էջ 526։

[17]*Նոյն*, էջ 525։

[18]*«Ամէն անձ ստիպուած է իր օգուտը, իր վիճակը մտածելու, անոր համար ամենակարեւորը ինքն է, ամէնէն առաջ ի՛ր գոյութիւնը, եւ՝ ամբողջութիւնը»,- յետագայում՝ 1922ին գրելու էր Շանթը՝ իր «Ազգութիւնը Հիմք Մարդկային Ընկերութեան» աշխատութեան մէջ- տե՛ս՝ Շանթի Երկերը, հինգերորդ հատոր*, էջ 39։

[19]*Փանոսեան*, էջ 295։

[20]Nitsshche, էջ 30։

[21]*Նոյն*, էջ 31։

[22]*Նոյն*։

[23]*Նոյն*։

[24]*Նոյն*։

[25]*Շանթի Երկերը, հինգերորդ հատոր*, էջ 83։

[26]*Նոյն*, էջ 84։

[27]*Նոյն*, էջ 85։

[28]*Այս վիպակը՝ «Գլուխ Պահող Կիկոսը» խորագրով նախ տպուել է Նորք հանդէսում*, 1926ին, *ապա՝ առանձին գրքով՝* 1929ին։ *Այս վիպակի հիման վրայ Հայֆիլմը* 1932ին *նկարահանել է համանուն կինոնկար։*

[29]E. Verkharn [Emile Verhaeren], *Izbrannoe* [*Ընտրանի*], *Մոսկուա*, 1955, էջ 494։

## THE PROBLEM OF FREEDOM IN LEVON SHANT'S PLAY, 'THE CHAINED ONE'
(Summary)

VACHAGAN GRIGORIAN

Levon Shant's play, 'The Chained One' (*Shghtaivatse*) was written in 1918, under the impact of the two Russian Revolutions of 1917. The play takes place in the medieval Armenian capital, Ani, in the 12th century AD. The Armenian prince, Pahlavuni, leading the Armenian masses of the city, brings down the Turkish emir. The political upheaval continues, however, after the expulsion of the foreign ruler. Many of the participants of the revolt, especially those from the lower classes, attempt to continue the struggle to attain social justice. Prince Pahlavuni feels obliged to use force to end the chaos and restore order. Shant uses two different versions of the ancient Armenian myth of Artavazd, mentioned in Classical Armenian literature, to symbolize two contradictory understandings of freedom. The playwright's conclusion is that the concept of freedom can only be realized when future generations can overcome their instincts to rule over and control others. The author of this article draws parallels between Shant's play and *Les aubes* by the Belgian writer, Emile Verhaeren.